ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 ապրիլի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

57
(2907)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՆՆՉԱԿԱՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԸ ԲԱՐՁՐԱՑՐԵԼ ԵՆ

Սերգեյ Ավագյանը նշանակվել է Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնի պետ

36 կգ ոսկու, 293 միլիոն ՌԴ ռուբլու հափշտակման գործով ՀՀ քննչական կոմիտեի քննչական խմբի ղեկավարին նոր պաշտոն են տվել:

Երեկ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնեց, որ արդարադատության երկրորդ դասի խորհրդական Սերգեյ Ավագյանը նշանակվել է քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյան քաղաքի քննչական բաժնի պետ՝ազատվելով ՔԿ Երեւան քաղաքի քննչական վարչության՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալի պաշտոնից:

Նկատենք, որ Ավագյանը անձամբ ղեկավարել է 36 կգ ոսկու հափշտակման քրեական գործը եւ, ըստ էության, ավազակային հարձակման առեղծվածի հետք վրա դուրս գալը ճակատագրական եղավ քննիչ Ավագյանի համար, ու նրան նշանակեցին Աբովյան քաղաքի քննչական բաժնի պետ:

ՔՊ-ի համար ընդդիմության ցանկացած առաջարկ անընդունելի է, անգամ, եթե դա Հայաստանի շահերից է բխում: ArmLur.am-ը երեկ հայտնել էր, որ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունը Հայաստանի Հանրապետության եւ ադրբեջանական հանրապետության միջեւ սահմանազատման եւ սահմանագծման վերաբերյալ ԱԺ հայտարարության նախագիծ է շրջանառության մեջ դրել: Նախագծի հիմնական շեշտադրումն այն էր, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատումը եւ սահմանագծումը պետք է համապատասխանեն միջազգային նորմերին եւ բխեն միջազգային իրավական մի շարք կարեւոր փաստաթղթերից: Այսինքն՝ ԱԺ հայտարարության մեջ հստակ նշվում էր, թե ինչի հիման վրա պետք է տեղի ունենա սահմանազատումը: Երեկ այն քննարկվեց ԱԺ արտաքին հարցերի մշտական հանձնաժողովում, բայց ՔՊ-ականները, առանց որեւէ հիմնավորման, մերժեցին ընդդիմության հեղինակած հայտարարության նախագիծը՝ դեմ քվեարկելով դրան: Հանձնաժողովի անդամ, իր ադրբեջանամետ հայտարարություններով աչքի ընկնող Մարիա Կարապետյանին, սակայն, ընդդիմության նախագիծը դուր չեկավ, ու նրա «հուշումներով»՝ հանձնաժողովի բոլոր ՔՊ-ական անդամները դեմ քվեարկեցին նախագծին: Ընդ որում՝ բացի իրենց անգիր արած հայտարարություններից, այդպես էլ որեւէ հստակ պատճառաբանում չբերեցին՝ ինչու են մերժում նախագիծը: Այլեւս փաստ է՝ իրենց ժողովրդավարության բաստիոն հռչակած ՔՊ-ականները քաղաքական առաջին ամբիոնում՝ խորհրդարանում, բոլոր որոշումները կայացնում են բացառապես միանձնյա ու շարժվում են ոչ թե պետական շահով, այլ պարզապես իրենց քաղաքական քմահաճույքով:

Ապրիլի 25-ին որոշիչ օր է լինելու՝ շուրջ 2.5 տարի կալանքի տակ գտնվող «Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինքի՝ Վանաձորի համայնքապետի հաղթած թեկնածու Մամիկոն Ասլանյանի համար: Վերջինիս պաշտպանը միջնորդություն է ներկայացնելու դատարան՝ փոխելու համար նրա կալանքի խափանման միջոցը, քանի որ գործով 30 վկաները արդեն հարցաքննվել են, եւ վերացել է նրանց հնարավոր ճնշման հնարավորությունն ու իմաստը: Հիշեցնենք, որ քննչական կոմիտեն հայտարարել էր, որ առերեւույթ տվյալներ են ձեռք բերվել՝ 2016 թ. հոկտեմբերի 10-ից մինչեւ 2021թ. հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Մամիկոն Ասլանյանի կողմից իր պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ: Ասլանյանի պաշտպանները պնդում են, որ նրա նկատմամբ քաղաքական հետապնդում է իրականացվում: Քրեական գործը հիմա էլ քննում է ՀՀ հակակոռուպցիոն դատարանը: Տարբեր զեկույցներում Մամիկոն Ասլանյանի դեպքը հիշատակվում է որպես քաղաքական բանտարկություն կամ քաղաքական մոտիվներով կալանք:

Իշխանությունը, ավելի կոնկրետ՝ վարչապետի աշխատակազմը, 24 մլն 281 հազար դրամ արժողությամբ պայմանագիր է կնքել «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ»-ի հետ, որն իրենից ենթադրում է միջոցառման կազմակերպման ծառայություններ: Իսկ ի՞նչ ծառայություն պետք է մատուցի այդ ՍՊԸ-ն. պարզվում է՝ Հրանուշ Հակոբյանի «Արի տուն» ծրագրի անհաջող կրկնօրինակն է փորձ արվում գործի դնելու: Նախարարությունը, թեեւ փակված է, այնուամենայնիվ, Հայաստանում գործում է դեռ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը, որն էլ ստանձնել է այս պայմանագրի կատարումը: Պայմանագրով նախատեսվում է. ««Սփյուռքի երիտասարդ առաջնորդների վերապատրաստում» միջոցառման շրջանակներում ծառայությունների ձեռքբերում, այդ թվում՝ միջոցառումների հետ կապված ծառայություններ. միջոցառումը պետք է կազմակերպել 2024 թվականի սեպտեմբերի 22-ից հոկտեմբերի 5-ը: Օրակարգը նախապես կտրամադրվի Պատվիրատուի կողմից»: Կհետեւենք իրադարձության զարգացումներին:

ԶՐՈՒՅՑ

ՓՈՐՁԵՑ ԿԱՄԵՑՆԵԼ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը, որը վերջին օրերին դարբերաբար լինում է Տավուշի մարզում, «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մանրամասներ է ներկայացրել այնտեղ տեղի ունեցող գործընթացից:

-Պարոն Աբրահամյան, ի՞նչ իրավիճակ էր Տավուշում: Քաղաքացիները մտահոգություններ են հայտնում, որ սահմանազատման աշխատանքների արդյունքում իրենց բնակարանները, արոտավայրերը հնարավոր է անցնեն թշնամուն: Ի՞նչ է սպասվում:

-Եղած խնդիրները մի քանի հարթության վրա պետք է դիտարկել, առաջինը՝ կոնկրետ գյուղական բնակավայրերն են, որոնց հետ դա կոնկրետ առնչություն ունի, քանի որ անցնում են մեկի գյուղի հատվածով, մեկի արոտավայրով, մյուսի համար կենսական նշանակություն ունեցող հատվածով:

Երկրորդը՝ մարզային հարթությունն է, քանի որ սահմանազատման աշխատանքները լինելու են մի քանի գյուղերում, բայց դրանք ազդեցություն են ունենալու մարզային ամբողջ կոմունիկացիայի վրա:

Երրորդը՝ հանրապետական նշանակության խնդիրներն են, առաջին հերթին՝ անվտանգային խոցելիությունը, որը ստեղծում են այս հակապետական գործունեության պարագայում հայաստանյան իշխանությունների:

-Պարոն Աբրահամյան, նաեւ կա պայմանավորվածություն, որ դիրքերում երկու կողմից էլ սահմանապահներ են տեղակայվելու, այսինքն՝ զորքերը հետ են քաշվելու, փոխարենը սահմանապահներն են հսկելու: Որքանո՞վ է սա տեղին, ի՞նչ վտանգներ կարող են առաջ գալ:

-Քանի բոլոր հատվածներում աշխատանքները իրականացված չեն, ընդհանուր պատկեր չկա՝ ինչ սկզբունքով եւ ինչ մոտեցումներով են իրականացվելու սահմանային ճշգրտման աշխատանքները, ապա այս պարագայում բանակային կորպուսների հետ քաշումը եւ սահմանապահների տեղակայումը խնդրահարույց են, եւ ցանկացած իրավիճակի դեպքում, որը կարող է բերել անկանխատեսելի իրադարձությունների կամ սահմանային սրացումների, այս պարագայում կարեւոր է, որ սահմանին կանգնած լինի ՀՈՒ զինծառայողը, ոչ թե ԱԱԾ սահմանապահ ծառայության:

-Արդեն 4-րդ օրն է՝ Տավուշցիները ճանապարհներ են փակում եւ պահանջում են դադարեցնել սահմանագծման աշխատանքները: Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է նման ընդվզումներով կասեցնել այս գործընթացը:

-Հանրային այս ընդվզումները դիմակայության օջախներ են ստեղծել Տավուշի մարզի տարբեր ուղղություններում, սրանք բավականին կարեւոր նշանակություն ունեն իշխանությունների սանձարձակ գործողությունները դանդաղեցնելու կամ կասեցնելու, բայց սրանք ավելի արդյունավետ կլինեն, եթե մասշտաբների առումով մեծանան եւ հանրապետական մակարդակով լինեն:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԹՈՒՅԼ ՉԵՆ ՏՎԵԼ ՏՈՒՆ ԶԱՆԳԵԼ ⇨

Բաքվում ապօրինաբար պահվող ռազմագերիների եւ պատանդառված անձանց պահման իրական պայմանների, նրանց նկատմամբ վերաբեմունքի մասին հստակ, անկողմնակալ ինֆորմացիայի աղբյուր, ցավոք, գոյություն չունի: Այս մասին այսօր՝ ապրիլի 23-ին, լրագրողների հետ զրույցում ասաց Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը:

«Այն, ինչ Կարմիր խաչից ստանում ենք, բավարար համարել չի կարելի: Չկան միջազգային մեխանիզմներ, որոնցով հարազատներն ամբողջական տեղեկատվություն կունենան, թե ինչ պայմաններում են ապրում, պահվում գերեվարված անձինք»,-ասաց նա:

Ստեփանյանի խոսքով՝ Կարմիր խաչի խողովակի անբավարարության մասին է խոսում նաեւ այն, որ հացադուլ հայտարարելուց հետո, որպես պատիժ, ադրբեջանական կողմն անգամ դադարեցրել է Ռուբեն Վարդանյանի՝ հարազատների հետ խոսելու հնարավորությունը: «Շուրջ 10-14 օր նա ընդհանրապես հարազատների հետ կապ պահպանել չէր կարողանում: Դա նշանակում է, որ այդ անձինք շարունակում են գտնվել իրենց իրավունքների անմիջական խախտման ներքո: Միակ ճանապարհը նրանց իրավունքների վերականգնման համար, նրանց անհապաղ ազատ արձակումն է:



Ինչ վերաբերում է պետության կողմից քայլերին, ցավոք սրտի, ես չեմ տեսնում, որ Հայաստանի արտաքին քաղաքականությունը որեւէ հստակ, համառ աշխատանք տարվի գերիների կամ պատանդառված անձանց վերադարձի ուղղությամբ: Այո, կան իրավական գործընթացներ, իրավական շրջանակներում այս հարցը առաջ է մղվում Հայաստանի կողմից, բայց բանակցային դաշտում այս թեման կարծես թե չկա: Նաեւ սա է Ադրբեջանին թույլ տալիս ավելի անպատիժ գործելու»,-ասաց նա:

ՇՏԿՎՈՒՄ ԵՆ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԸ

Հայաստանի եւ Ադրբեջանի փորձագիտական խմբերը սկսել են կոորդինատների ճշտման գործընթացը: Այս մասին հայտարարություն է տարածել ՀՀ վարչապետի աշխատակազմը:

«Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի եւ Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի 8-րդ հանդիպման արդյունքներով ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ 2024 թվականի ապրիլի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության սահմանին երկրների փորձագիտական խմբերը սկսել են կոորդինատների ճշտման գործընթացը՝ հիմնվելով տեղում գեոդեզիական չափումների վրա»,- ասված է հայտարարության մեջ:

ՈՐՔԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ Է ԼՐԱՑՎԵԼ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ապրիլի 1-ին հրապարակած հաշվետվության համաձայն 17 հազարից ավելի անձ ներկայացրել է հայտարարագիր:

2023 թվականի սկսած՝ պաշտոնատար անձանց եւ նրանց անդամների հայտարարագրերի բոլոր տեսակները ներկայացվել են ներդրված հայտարարագրման նոր էլեկտրոնային համակարգի միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում հանձնաժողով է ներկայացվել 17 հազար 149 հայտարարագիր, այդ թվում 8 352՝ պաշտոնատար անձի, 8 797՝ ընտանիքի անդամ:

«Հայաստան» խմբակցությունը նոր նախագիծ է շրջանառության մեջ դրել

Ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունը Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանական Հանրապետության միջեւ սահմանազատման եւ սահմանագծման վերաբերյալ ԱԺ հայտարարության նախագիծ է շրջանառության մեջ դրել:

Այն այսօր կքննարկվի ԱԺ Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նիստում:

Հիմնական զեկուցողը ԱԺ պատգամավոր Արթուր Խաչատրյանն է:

ԿԸՆԴԼԱՅՆԻ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Եվրամիության երկրների արտաքին գործերի նախարարները պայմանավորվել են ընդլայնել Իրանի նկատմամբ պատժամիջոցները՝ Ռուսաստան հրթիռների հնարավոր փոխանցումը կանխելու համար: Այս մասին Լյուքսեմբուրգում արտգործնախարարների հանդիպման արդյունքներով հայտարարել է ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ժոզեֆ Բորելը:

«Մենք քաղաքական համաձայնություն ենք ձեռք բերել, որպեսզի ընդլայնենք անօդաչուների նկատմամբ գործող պատժամիջոցների ռեժիմը եւ այն տարածենք հրթիռների եւ Ռուսաստանին դրանց հնարավոր մատակարարումների վրա»,- ասել է Բորելը:

Նա հավելել է, որ ԵՄ-ն նաեւ կընդլայնի սահմանափակող միջոցառումների աշխարհագրությունը, որպեսզի դրա տակ ընկնեն անօդաչուների եւ հրթիռների մատակարարումները ոչ միայն Ռուսաստանին, այլեւ տարածաշրջանի միջնորդ երկրներին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎՐԱՍՏԱՆԸ ՈՂՋՈՒՆԵԼ Է ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

«Վրաստանը ողջունում է Ադրբեջանի եւ Հայաստանի սահմանների սահմանազատման հանձնաժողովի համաձայնությունը սահմանների սահմանազատման գործընթաց սկսելու վերաբերյալ»: Այդ մասին նշված է երկրի ԱԳՆ հայտարարության մեջ:

«Վրաստանը շահագրգռված է տարածաշրջանում կայուն խաղաղության ապահովմամբ եւ վերահաստատում է ամուր հանձնառությունը՝ նպաստելու երկու հարեւանների միջեւ խաղաղության եւ վստահության ձեւավորման գործընթացին»,- շեշտել է Վրաստանի ԱԳ նախարարությունը՝ X-ի միկրոբլոգում տարածած հաղորդագրության մեջ:

ԻՐԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Իրանի արտաքին գործերի նախարարությունն անդրադարձել է Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ սահմանազատման գործընթաց սկսելու վերաբերյալ համաձայնությանը: Իրանի ԱԳՆ մամուլի խոսնակ Նասեր Քանանին հայտարարել է, որ Իրանը հարգում է Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ սահմանազատման հանձնաժողովների նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները:

«Մենք հարգում ենք Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ սահմանազատման հանձնաժողովների նիստի պայմանավորվածությունները: Հարավային Կովկասում կայուն խաղաղության ու կայունության հաստատման համար անհրաժեշտ է շարունակել սահմանային խնդիրները լուծելու երկու երկրների ջանքերը՝ հենվելով խաղաղ մեթոդների վրա եւ երկու երկրների կողմից միմյանց ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության փոխադարձ հարգանքի շրջանակներում»,- ասել է Քանանին:

ԷՐԴՈՂԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԿՈՉ Է ԱՐԵԼ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը կոչ է արել Հայաստանի իշխանություններին կողմնորոշվել առկա իրողություններում՝ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման ճանապարհային քարտեզ մշակելու համար:

«Տարածաշրջանում այժմ նոր կարգ է հաստատվում: Ժամանակն է հրաժարվել անհիմն հիշողություններից, ավելի լավ է գործել՝ ելնելով ներկա ժամանակի իրողություններից: Հիմա սա հասկանում է նաեւ Փաշինյանը: Հիմա իրատեսական հիմունքներով նոր ճանապարհային քարտեզներ ստեղծելու ժամանակն է: Հուսով եմ, որ Հայաստանը կազատվի այն խավարից, որի մեջ նրան ներքաշել է սփյուռքը եւ կընտրի նոր ձեռնարկումների ուղին հանուն պայծառ ապագայի»,- Իրաքից վերադառնալուց հետո իրեն ուղեկցող լրագրողներին է ասել նախագահը: Նրա խոսքը մեջբերում է Anadolu գործակալությունը: Ըստ Էրդողանի, «հնարավորությունների պատուհանը ոչ միշտ է բաց լինելու, եւ անհրաժեշտ է արդյունավետ օգտագործել պահը»:

ՊԱՅՔԱՐ

«ՎԱՂԸ Ի՞ՆՉ Է ԼԻՆԵԼՈՒ». ԲԱԳՐԱՏ ԳԱԼՍՏԱՆՅԱՆ

«Հայաստանի Հանրապետությունն այնքան է, որքան իր զինվորը կարող է կանգնել»: Ոսկեպար-Կիրանց ճանապարհահատվածին լրագրողների հետ զրույցում այս մասին ասաց Տավուշի թեմի առաջնորդ Տեր Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը:

«Ինձ համար ՀՀ տարածքային ամբողջականությունը ո՛չ թվերով է, ո՛չ սահմաններով է, ո՛չ էլ... այս վերջին շրջանում են մարդիկ հիշել Ալմաթի, սովետական, ԽՍՀՄ, չգիտեմ՝ էլ ինչ, ՄԱԿ, շատ բաներ են հիշել վերջին 1-2 տարում: 1 տարի առաջ ՀՀ-ն 29,800 քառակուսի մետր էր, ըստ, ինչ-որ հանրագիտարանի, հիմա ՀՀ-ն 29,743 է, երեւի ըստ մեկ այլ հանրագիտարանի, վաղը ի՞նչ է լինելու...»,- ասաց Սրբազանը:

Նա շեշտեց՝ երկրի վարչապետը պարտավոր է պատասխանատու լինել իր յուրաքանչյուր խոսքի համար:

«Իրավիճակը սարսափելի բարդ է, այն, ինչ մենք ամիսներով, օրերով մտածում էինք, շոշափելի իրականություն է դարձել. նահանջել է մեր դիրքերից մեր զորքը», - Տավուշի մարզի Կիրանց գյուղում «Ժողովուրդ» հետ զրույցում հայտնել է, Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Սրբազանը:

«Արդեն իսկ ասում են, որ ադրբեջանական դրոշ է ծածանվում մեր դիրքերի վրա: Ես չեմ տեսել իմ աչքով, բայց այդպես ասում են, վստահաբար տեսել են մարդիկ:

Հասկանում եք՝ ինչ հոգեկան ցնցումների մեջ են մարդիկ, չարիքից պարտված լինելու զգացում մեջ է մեր ժողովուրդը: Այ պայքարը ճշմարտության եւ արդարության մասինէ եւ այն պետք է հաղթանակի: Այլ տարբերակ չունենք:

Ջավեշտալի վիճակ է, զորքը բացում է դռները հակառակորդի առջեւ եւ ժողովուրդը պայքարում է իր ոստիկանության ու իր զորքի դեմ, ասում է՝ դռները մի բացեք: Պատմության մեջ միշտ հակառակն է եղել: Սա ուրացման եւ ստին ծառայելու գործընթաց է»,-ասաց նա:

Հիշեցնենք, որ Տավուշի մարզի Կիրանց համայնքում արդեն մի քանի օր է, ինչ փակ է միջպետական ճանապարհը, այն բանից հետո երբ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակը հայտարարություն տարածեց, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել Ադրբեջանի հետ սահմանազատման եւ սահմանագծման աշխատանքների հետ կապված: Նաեւ քարտեզ է հրապարակել, որով Կիրանցի որոշ հատված անցնելու է Ադրբեջանի վերահսկողության տակ:

Նշենք, որ նախօրեին Ոսկեպարում ժողովուրդը թույլ չէր տալիս ականազերծել եկեղեցուց քիչ հեռու գտնվող տարածքը: Եկեղեցին 7-րդ դարի եկեղեցի է: Սահամազատումից հետո եկեղեցին հայտնվելու է սահմանի եզրին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՏԵՂԱԴՐՎԵԼ Է ԱՌԱՋԻՆ ՍՅՈՒՆԸ

2024 թվականի ապրիլի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության սահմանին գեոդեզիական չափումների հիման վրա, կոորդինատների ճշգրտման աշխատանքների շրջանակներում տեղադրվել է առաջին սահմանային սյունը: Երկու երկրների փորձագիտական խմբերի աշխատանքները շարունակվում են:

Ինչպես ավելի վաղ հաղորդվել էր, Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի եւ Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի 8-րդ հանդիպման արդյունքներով ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության սահմանին երկու երկրների փորձագիտական խմբերն այսօր սկսել են կոորդինատների ճշտման գործընթացը՝ հիմնվելով տեղանքում գեոդեզիական չափումների վրա:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՄԲՌՆՈՒՄ

Բաքուն եւ Երեւանը ընդհանուր պատկերացում ունեն, թե ինչպիսին պետք է լինի խաղաղության պայմանագիրը: Ինչպես հաղորդում է ԱՊԱ-ն, այս մասին ապրիլի 23-ին հայտարարել է նախագահ Իլհամ Ալիեւը՝ելույթ ունենալով ADA համալսարանում կազմակերպված «COP29 եւ կանաչ տեսլականը Ադրբեջանի համար» թեմայով միջազգային համաժողովում:

Ադրբեջանի նախագահի վկայությամբ, «մենք ավելի մոտ ենք խնդրի լուծմանը, քան երբեւէ»: «Օկուպացիայի ժամանակ մենք շատ հեռու էինք սրանից: Այն ժամանակ մենք նույնիսկ չկարողացանք պայմանավորվել հիմնարար սկզբունքների շուրջ»,- ասել է Ալիեւը:

«Հիշեցնելով, որ այն ժամանակ նույնիսկ Մադրիդյան սկզբունքների շուրջ համաձայնություն ձեռք չի բերվել, պետության ղեկավարն ասել է, որ այդ պահին նույնիսկ խաղաղության համաձայնագրի նախագիծ չկար: Իսկ հիմա այն կա»,- մեջբերում է լրատվամիջոցը:

«Այժմ մենք ընդհանուր պատկերացում ունենք, թե ինչպիսին պետք է լինի խաղաղության համաձայնագիրը: Պարզապես պետք է մանրամասները մշակենք: Սակայն, իհարկե, երկու կողմերին էլ ժամանակ է պետք»,- հավելել է Ալիեւը:

Ելնելով վերը նշված մեջբերումներից՝ ապագա համաձայնագրի անկյունաքարը «օկուպացիայից հրաժարվելն է»: Ավելի վաղ Բաքուն հրաժարվում էր ընդունել հայկական հողի բազմաթիվ հեկտարների՝ սահմանամերձ գյուղերի վարչական տարածքների օկուպացման փաստը: Էլ ավելի վաղ Ալիեւն ասել էր, որ Ադրբեջանը չի լքի 2020 թվականից հետո զավթած Հայաստանի ինքնիշխան տարածքը: Այսպիսով, ադրբեջանական իշխանությունների տրամաբանությամբ, ստացվում է, որ խոսքը միայն հայկական կողմից միակողմանի զիջումների մասին է, ինչով էլ պայմանավորված են Ադրբեջանի նախագահի լավատեսական գնահատականները:

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

«ՕՐԵՆՔՈՎ ԳՈՂԻ» ՓԵՍԱՅԻՑ՝ ՄԻՆՉԵՎ ԴԱՏԱՎՈՐ

36 կգ ոսկու, 293 միլիոն ՌԴ ռուբլու անհետացման գործով ուշագրավ զարգացումները շարունակվում են: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ իրական գործով կալանավորվածները մարզի բնակիչներ են: Մասնավորապես՝ իրական վարույթով կալանավորվածներից 3-ը Սյունիքի մարզի Կապան քաղաքի բնակիչներ են, 2-ը՝ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի՝ 1-ը Մեծամոր, 1-ը Մերձավան, 1-ը Արմավիր մարզի Խոյ համայնքի բնակիչ:

Գրել էինք, որ քննչական կոմիտեն քրեական գործի շրջանակում վկայի կարգավիճակում հարցաքննել է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արշակ Պետրոսյանին: Ավելին, քրեական վարույթով իրավապահների տեսադաշտում է հայտնվել նաեւ «օրենքով գողի» փեսան»:

Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնել էր, որ ապրիլի 10-ին «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով հետապնդել են «Հունդայի Սոնատա» մակնիշի ավտոմեքենային, եւ ժամը 07:15-ից մինչեւ 07:20-ն ընկած ժամանակահատվածում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մայրաքաղաքային փողոցի դիմաց արհեստական խոչընդոտ ստեղծելով՝ մեքենայի դիմացի աջ դռան պատուհանից զենքի գործադրման սպառնալիքով կանգնեցրել են նշված ավտոմեքենան: Կանգնեցնելուց հետո ենթադրյալ հանցագործությունը կատարած անձինք, ԱԱԾ աշխատակիցների համազգեստին նմանվող համազգեստով եւ դիմակավորված, դուրս գալով ավտոմեքենայից, ներկայացել են իբրեւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ, եւ ավտոմեքենայում գտնվող 3 անձի նկատմամբ զենքի կիրառմամբ բռնություն գործադրելով՝ նրանց դուրս են բերել ավտոմեքենայից, թմրամիջոց ու այլ արգելված իրեր փնտրելու եւ նրանց ձերբակալելու պատրվակով ձեռքերին անցկացրել են ձեռնաշղթաներ, ապա ավտոմեքենայից հափշտակելով առանձնապես խոշոր չափի՝ 36 կգ քաշով 999 հարգի ոսկյա ձուլակտորները եւ 293.000.000 ՌԴ ռուբլի գումարի պարունակությամբ պայուսակները, հիշյալ անձանց նկատմամբ բռնություն գործադրելով, նստեցրել են նույն ավտոմեքենան, դիմացի դռնից արցունքաբեր գազ փչելով ավտոմեքենայի մեջ՝ «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով դիմել են փախուստի:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Ա.Ս.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 252-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերով, 456-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Քրեական վարույթի շրջանակներում քրեական հետապնդում է հարուցվել ընդհանուր 12 անձի նկատմամբ, որոնցից 5-ի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը, 3-ի նկատմամբ՝ այլ խափանման միջոցներ, 4 անձի ձերբակալելու որոշում է կայացվել եւ ոստիկանությանը տրվել է նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու հանձնարարություն:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԱՄՆ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ԱՀԱԲԵԿՈՂԸ

Հայտնաբերվել է Պռոշյան փողոցում ԱՄՆ քաղաքացու նկատմամբ օդաճնշիչ ատրճանակով ավազակային հարձակում կատարելու վերաբերյալ վարույթով հետախուզվող անձը:

Այս մասին հայտնում են Քննչական կոմիտեից:

«2024 թվականի մարտի 21-ին ահազանգ էր ստացվել այն մասին, որ անհայտ անձը զենքի գործադրմամբ օտարերկրացի անցորդից հափշտակել է նրա պայուսակը:

Դեպքի առթիվ իրականացված նախաքննությամբ դեպքի վայրից հայտնաբերվել եւ վերցվել էր «Stalker S17» տեսակի օդաճնշիչ ատրճանակ:

Քննչական գործողությունների արդյունքում պարզվել էր, որ ԱՄՆ քաղաքացուց առերեւույթ հափշտակությունը կատարել է 25-ամյա երիտասարդ:

Վերջինս, ըստ քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների, 2024թգ մարտի 21-ին՝ ժամը 10:30-ի սահմաններում, Երեւան քաղաքի «Սիրահարների այգում» ետեւից մոտեցել է օտարերկրացուն, իր մոտ գտնվող օդաճնշիչ ատրճանակով թիկունքից հարվածել նրա գլխին, հափշտակել վերջինիս ձեռքի պայուսակն ու դիմել փախուստի:

Երիտասարդի նկատմամբ հարուցվել էր հանրային քրեական հետապնդում եւ հայտարարվել էր հետախուզում:

2024 թվականի ապրիլի 15-ին վերջինս հայտնաբերվել եւ ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին: Նրան ներկայացվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (Ավազակությունը): Երիտասարդի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Պրոբացիայի ծառայության նախկին ղեկավար Գեւորգ Սիմոնյանը դատի է տվել արդարադատության նախարարությանը:

Նա վարչական դատարանի իր հայցով պահանջում է պարտավորացնել 07.02.2024 թ.-ից սկսած հայցվորին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն:

Նշենք, որ 2023 թվականի սեպտեմբերի 13-ին Վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում էր ստորագրել, որում նշվում էգ

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Գեւորգ Սիմոնյանին 2023 թվականի սեպտեմբերի 15-ից ազատել պրոբացիայի ծառայության պետի պաշտոնից»: Նշենք, որ Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի առաջարկությամբ եւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի համաձայնությամբ՝ Գեւորգ Սիմոնյանը 2023 թվականի հունվարին էր նշանակվել Պրոբացիայի ծառայության ղեկավար:

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՌԱԲԼՈՒՐՈՒՄ»՝ ԱՂԱԶԱՐՅԱՆԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԻՋԱԴԵՊԸ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի եւ 44-օրյա պատերազմի զոհված զինվորականների միջադեպի գործով դատարանում ուշագրավ փոփոխություններ են : Այս գործը քննում էր դատավոր Անի Մարտիրոսյանը եւ նա տեղափոխվելէ Յյ վերաքիչ դատարան ,ուստի գործով կազմի փոփոխություն է եղել ու գործվ մակագրել է դատավոր Արտուշ Գաբրիելյանին:

2023 թվականի սեպտեմբերի 21-ին ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանի եւ 44-օրյա պատերազմի հերոս Լեւոն Գալստյանի հոր՝ Արմեն Գալստյանի միջեւ Եռաբլուրում միջադեպ էր եղել, ինչի ժամանակ զոհված զինվորներից մեկի ծնողը ապտակել էր խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանին, իսկ նա էլ հայհոյել էր ծնողին:

Այս գործը մտել է դատարան եւ մեղադրյալի աթոռին է հայտնվել 44-օրյա պատերազմի հերոս Լեւոն Գալստյանի հայրը՝ Արմեն Գալստյանը, որ նա պատգամավորներ Հովիկ Աղազարյանի եւ Հակոբ Ասլանյանի քաղաքական հայացքներով եւ կուսակցական պատկանելիությամբ պայմանավորված՝ սեռական բնույթի բազմաթիվ հայհոյանքներ է հնչեցրել եւ անպարկեշտ արտահայտություններ արել վերջիններիս հասցեին, որի ընթացքում Արմեն Գալստյանը ոտքով մեկ անգամ դիտավորությամբ հարվածել է Հ.Աղազարյանի ազդրի հատվածին, որպիսի գործողություններով, հասարակությունից առանձնանալու եւ սեփական անձի առավելությունը ցուցադրելով, խոչընդոտել եւ թույլ չեն տվել Հովիկ Հովսեփի Աղազարյանին եւ Հակոբ Արսենի Ասլանյանին մուտք գործել «Եռաբլուր» զինվորական պանթեոն:

Ա.Գալստյանի, Ա.Աբրահամյանի եւ մյուս անձանց կողմից շարունակվող խուլիգանական բնույթի գործողությունները դադարեցվել են միայն ոստիկանության աշխատակիցների միջամտության արդյունքում:

Եվ ահա այս գործով դատարան է հրավիրվել Հովիկ Աղազարյանը, իսկ ահա մեղադրվող կողմը դատարան միջնորդություն է ներկայացրել՝ պնդելով, որ ՔՊ պատգամավորը տուժող չի կարող լինել այս գործով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ապրիլի 22-ից 23-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 113 դեպք, որից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՈՐԾՈՒՄ Է ՓԱՅՏԱԾՈՒԽԻ 96 ԱՐՏԱԴՐԱՄԱՍ

Տավուշի մարզի Իջեւանի եւ Բերդի տարածաշրջանների անտառներում, Դիլիջանի ազգային պարկում մեծ թիվ են կազմում ապօրինի հատումները: Վերջերս անտառապահներին կոչել են «անտառային պարեկներ», սակայն անտառում նրանց տեղաշարժվելու համար ոչ ձի են տվել, ոչ ավտոմեքենա, ոչ համազգեստ, ոչ էլ՝ զենք: Անտառային պարեկների աշխատավարձը *փոքր* է, անտառային պարեկների մեծամասնությունը համապատասխան կրթություն չունենալով՝ չեն կարող ապօրինի անտառհատումների վերաբերյալ արձանագրություններ կազմել: Անտառային պարեկները ենթարկվում են տվյալ անտառտնտեսության տնօրենի պահպանության գծով տեղակալին: Անտառային պարեկների ինստիտուտի ներմուծումը կոչված էր բարելավելու անտառների պահպանությունը, սակայն Իջեւան եւ Բերդ համայնքներում դա դրական արդյունք չի տվել: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը մի քանի անգամ հարցում է արել, թե մարզում փայտածուխի քանի արտադրամաս է գործում: Մարզպետ Ղալումյանը մի քանի անգամ, պատճառաբանելով, թե այդ թիվը փոփոխվում է , չէր պատասխանել հարցին: Ապրիլի 15-ին Տավուշի մարզպետին տեղեկատվական հարզում ուղարկեցինք, նրան հարցնելով. «ապրիլի 9-ին Դուք աշխատանքային քննարկում եք ունեցել ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանի հետ, քննարկվել են մարզում փայտածուխի արտադրամասերի գործունեության օրինականությունը, ապօրինի ծառահատումների ու փայտանյութի տեղափոխման դեմ ուղղված համատեղ միջոցառումները: Ապրիլի 9-ի դրությամբ Տավուշի մարզում փայտածուխի քանի՞ արտադրամաս էր գործում, նրանցից քանի՞սն է օրինական, քանի՞սն է համապատասխանում բնապահպանական նորմաներին»: Մարզպետարանից պատասխանել են. «2024 թվականի ապրիլի 9-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզում օրինական գործում են փայտածուխի 96 արտադրամասեր»: Մարզպետը անտեսել, չի պատասխանել այն հարցին, թե փայտածուխի արտադրամասերից քանի՞սն է համապատասխանում բնապահպանական նորմաներին:

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԿԻՐԱՆՑՈՒՄ ԴԱՍԱԴՈՒԼ Է

Ապրիլի 23-ին երկրորդ օրն էր, ինչ Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանցի հիմնական դպրոցում դասեր չէին կայանում: Այդպես բողոքում են տարածքները Ադրբեջանին միակողմանի հանձնելու դեմ:Կիրանցի դպրոցի տնօրեն Վոլոդյա Բաբինյանը հայտնեց, որ ծնողներն իրենց երեխաներին դպրոց չեն ուղարկում, ուսուցչները դպրոց՝աշխատավայր ներկայանում են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅ ԿԻՆԸ՝ ԶՈՀ ԵՎ ՀԵՐՈՍ»

Հայոց ցեղասպանության 109-րդ տարելիցին ընդառաջ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ժամանակավոր ցուցադրությունների սրահում հանրությանը ներկայացվեց ժամանակավոր ցուցադրություն՝ «Հայ կինը՝ ցեղասպանության զոհ եւ հերոս» խորագրով:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Էդիտա Գզոյանը նշել է, որ ցուցադրության նպատակը Հայոց ցեղասպանության տարիներին հայ կնոջ ճակատագրի վերհանումն է, բայց միեւնույն ժամանակ նրա արտասովոր քաջության եւ տոկունության ներկայացումը:

«Առանձին խորագրերով ներկայացված են մինչեւ ցեղասպանությունը հայ կնոջ կերպարը, նրա իրավունքների հետ կապված հարցեր: Ցուցադրությունում ներկայացված են հայ կանանց անհատական պատմություններ, որոնք, անցնելով թուրքական վայրագությունների միջով, դարձան պայքարի, կուռ կամքի եւ հայ ժողովրդի վերածննդի խորհրդանիշներ: Ցուցադրության մեջ ընդգրկված են հայ կանանց անհատական պատմություններ, որոնք ամբողջացնում ու ներկայացնում են ցեղասպանության տարիներին հայ կանանց բաժին հասած ողբերգական դրվագները»,- նշել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենը:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող, ցուցադրությունների կազմակերպիչ Սեդա Պարսամյանը նշել է, որ «Հայ կինը՝ ցեղասպանության զոհ եւ հերոս» խորագրով ցուցադրությունը կոչված է ներկայացնելու ոչ միայն ցեղասպանության տարիներին դաժան փորձությունների միջով անցած կանանց ճակատագրերը, այլեւ նրանց անսովոր տոկունությունն ու քաջությունը: «Ցուցադրությունը հստակ ժամանակագրության միջոցով ենք փորձել ներկայացնել. նախ ներկայացված է հայ կնոջ կերպարը Օսմանյան կայսրությունում 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին: Բազմաթիվ ցուցանմուշների՝ անձնական իրերի, հագուստների, զարդերի, լուսանկարների եւ այլ իրերի միջոցով փորձել ենք ցույց տալ, թե ինչպիսին էր հայ կինը ընտանիքում, կենցաղում, կրթության ոլորտում: Ինչպես նաեւ փորձել ենք վեր հանել կանանց իրավունքների հետ կապված հարցեր:

Ցուցադրության հիմքում երկու շատ կարեւոր շեշտադրում կա. խոսքը զոհի եւ հերոսի կոնցեպտի ընդլայնված ներկայացումն է: Այս ցուցադրության մեջ ոչ միայն ներկայացված են այն կանայք, որոնք խոշտանգվեցին եւ սպանվեցին, այլեւ կանայք, որոնք տեղահանության ընթացքում առեւանգվում էին, վաճառվում, ստրկության մատնվում, տարբեր տիպի բռնության ենթարկվում»,- ասել է նա:

Սեդա Պարսամյանն ընդգծել է, որ պատմությունները մեկ տասնյակից ավել են, որոնցից ամեն մեկը Հայոց ցեղասպանության մի դրվագ է ներկայացնում:

Ըստ նրա՝ Հայոց ցեղասպանության տարիների կնոջ թեման երբեւէ այսքան լայն չի լուսաբանվել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից: Պարսամյանը նշել է՝օգտագործվել են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի թանգարանային ցուցանմուշները, ինչպես նաեւ մեր մյուս թանգարաներում եղած այլ նմուշներ:

ԼՈՒՐԵՐ

«ՌԵՔՎԻԵՄԸ»՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը կկատարի Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի «Ռեքվիեմը»՝ նվիրված Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակին: «Ռեքվիեմը» կհնչի ապրիլի 23-ին՝ ժամը 23:59-ին (կեսգիշերին) «Արամ Խաչատրյան» համերգասրահում: Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Բոլոր ժամանակների այս ազդեցիկ եւ ոգեշունչ հոգեհանգստյան մեսսան՝ «Ռեքվիեմը», կղեկավարի հրավիրյալ անվանի դիրիժոր Ջորջ Փեիլիվանյանը, մենակատարներն են Անուշ Հովհաննիսյանը (սոպրանո), Սոֆյա Թումանյանը (մեցցո-սոպրանո), Դին Փաուերը (տենոր) եւ Նիկոլայ Էլսբերգը (բաս): «Ռեքվիեմը» կհնչի Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Հովհաննես Չեքիջյան) մասնակցությամբ:

Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի «Ռեքվիեմը» մարդկային հանճարի ստեղծած լավագույն ստեղծագործություններից է:

Նշենք, որ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավարը եւ գլխավոր դիրիժորը Էդուարդ Թոփչյանն է:

ԱՎԱՐՏՎԵԼ Է ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՇԱԲԱԹԸ

Ապրիլի 15-22-ը՝ մեկ շաբաթ շարունակ մայրաքաղաքի, մարզային, համայնքային, մասնագիտական, բուհական գրադարանները հագեցած են եղել գրադարանային գործին առնչվող, կրթամշակութային բազմաբնույթ միջոցառումներով:

այկական գրադարանային ասոցիացիայի նախաձեռնությամբ Հայաստանում այս օրերին անցկացված «Ազգային գրադարանային շաբաթ» ծրագիրը կրում էր «Գրադարանը նորարարության հարթակ» խորագիրը:

«Ազգային գրադարանային շաբաթ» ծրագրի շրջանակում կազմակերպվել են գրքերի քննարկումներ, շնորհանդեսներ, հանդիպումներ հրատարակչությունների ներկայացուցիչների հետ, դասախոսություններ, վերապատրաստումներ գրադարանավարների համար, փոխայցելություններ ու շրջայցեր հանրապետության գրադարաններ՝ փորձի փոխանակման ու նորարար լուծումները միմյանց հետ կիսելու նպատակով:

Ծրագրի շրջանակում տարբեր հարթակներում քննարկվել են արդի գրադարանների խնդիրները, զարգացման հեռանկարները, նոր տեխնոլոգիաների ու նորարարությունների կիրառման կարեւորությունը: Այս համատեքստում ընդգծվել են գրադարանների դերակատարությունը ժամանակակից ընթերցողի պահանջների բավարարման, ինչպես նաեւ երիտասարդ սերնդի կրթության նպաստմանը միտված հնարավոր ուղիները:

Նշենք, որ Հայկական գրադարանային ասոցիացիայի նախաձեռնությամբ այս ծրագիրն անցկացվում է 2002 թվականից: Այն նպատակ ունի հանրայնացնել գրադարանների ու ընթերցանության դերն ու կարեւորությունը հանրության զարգացման ու կրթական մակարդակի բարելավման տեսանկյունից:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար. 21 մարդ տացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է

Սամվել Մարտիրոսյանը զգուշացրել է SMS հաղորդագրության տեսքով ստացվող հերթական կեղծիքի մասին. «Էս պահին զանգվածային տարածվող երկու բան կա: Երկուսն էլ նոր չեն, մեղմ ասած: Ջուտ մի փոքր տեքստն է փոխվել»:

Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում հայտնել է տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանը՝ նշելով, որ քաղաքացիները ստանում են կեղծ հաղորդագրություններ ու ծանուցումներ «Հայփոստ»-ից, որը ներկայացվում է որպես «աշխատանքի թույլ առաջարկ»:

ԿՎԵՐՄԿՄԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թաիլանդը հաստատում է Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հետ ազատ առեւտրի համաձայնագրի կնքման շուրջ բանակցություններ սկսելու իր մտադրությունը: Այս մասին ճեպազրույցում հայտարարել է Թաիլանդի արտաքին գործերի նախարարության ղեկավար Պանպրի Փիթհանուկոնը՝ Բանգկոկում իր ղազախ գործընկեր Մուրատ Նուրթլեուի հետ հանդիպման արդյունքներով:

«Ուրախ եմ, որ Ղազախստանը Թաիլանդի ամենամեծ առեւտրային գործընկերն է Կենտրոնական Ասիայում: Հուսով եմ, որ մեր երկկողմ ազատ առեւտրի համաձայնագիրը պատրաստ կլինի եւ կստորագրվի մոտ ապագայում: Ցանկանում եմ հաստատել Թաիլանդի մտադրությունը՝ զարգացնել տնտեսական համագործակցությունը Կենտրոնական Ասիայի եւ տարածաշրջանի հարեւան երկրների հետ՝ բանակցություններ սկսելով Թաիլանդի եւ ԵԱՏՄ միջեւ ազատ առեւտրի համաձայնագրի կնքման շուրջ: «Այն կավելացնի երկկողմանի առեւտրի ծավալները եւ ապագայում ճանապարհ կհարթի Հարավարեւելյան Ասիայի երկրների ասոցիացիայի եւ ԵԱՏՄ-ի միջեւ ազատ առեւտրի համաձայնագրի համար», - ասել է նա:

ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ

Պետական եկամուտների կոմիտեն ներկայացրել է հետբացթողումային հսկողության եւ ստուգումների վարչության 2024թ. մարտ ամսվա ընթացքում իրականացված հսկողական աշխատանքի արդյունքները:

Ապրանքների բացթողումից հետո, ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության եւ ստուգումների վարչության իրականացված կամերալ եւ արտագնա մաքսային ստուգումների արդյունքներով հայտնաբերվել են ՀՀ մաքսային օրենսդրության խախտման դեպքեր, որոնց արդյունքում պակաս հաշվարկված եւ չվճարված մաքսային վճարների եւ դրանց նկատմամբ օրենքով հաշվարկված տույժերի ընդհանուր գումարը կազմել է 41.101 մլն դրամ:

ՔԱՐԳԱՑՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՄԵԿՆԱՐԿ Է ՏՐՎԵԼ

Կայացել է ԱՄՀ նախարարության եւ Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ համագործակցությամբ իրականացվող՝ արդյունքների վրա հիմնված ֆինանսավորմամբ ակտիվ զբաղվածության ծրագրի դաշտոնական մեկնարկի արարողությունը:

Միջոցառմանը մասնակցել են ԱՄՀ նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը, Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալ Կոնստանտին Սոկուլսկին, Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսսը, Ավստրիական զարգացման գործակալության ծրագրերի ղեկավար Վահե Սարգսյանը եւ այլ հյուրեր:

Մեկնարկող ծրագիրը հանդիսանում է զբաղվածության նոր ռազմավարության հիմնական բաղադրիչներից մեկը, որը հնարավորություն կտա զբաղվածության ծրագրերն իրականացնել արդյունքի հիման վրա ֆինանսավորման սկզբունքով եւ կատարել մասշտաբային վերապատրաստումներ եւ աշխատանքի տեղավորմանն ուղղված ֆինանսական ներդրումներ: Ծրագրի իրականացման միջոցով բնակչության ոչ լիարժեք օգտագործված աշխատուժի, կրթություն եւ զբաղվածություն չունեցող անձանց, 30-40 տարեկան գործազուրկ կանանց եւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների զբաղվածության խնդիրները կստանան լուծումներ՝ նրանց տրամադրելով ոչ միայն ուսուցում, այլեւ աշխատանք:

Ակտիվ զբաղվածության ծրագրերի իրականացմամբ կարեւորելով աշխատաշուկայում մրցունակ աշխատուժի ձեւավորումն ու աշխատանքային հնարավորությունների ընդլայնումը՝ նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանն այդ գործընթացում ընդգծել է պետության, մասնավոր կազմակերպությունների եւ միջազգային կառույցների շարունակական համագործակցությունը: Վերջինիս խոսքով՝ զբաղվածության ծրագրի այս մոդելը մշակվել է հաշվի առնելով տարբեր երկրների փորձը՝ կարեւոր սկզբունք համարելով ոչ միայն գիտելիք ու հմտություններ տալը, այլ նաեւ այն, որ վերջնարդյունքում ունենանք կայուն աշխատանքով ապահովված քաղաքացիներ: Այն նպատակաուղղված է աշխատաշուկայի, տնտեսական եւ կրթական զարգացմանը, երկրում բարձր արտադրողականությամբ աշխատատեղերի ստեղծմանն, մրցունակ աշխատուժի խթանմանն, ինչպես նաեւ առաջարկի ու պահանջարկի անհամապատասխանությունների կրճատմանը:

Արդյունքների վրա հիմնված ֆինանսավորմամբ ակտիվ զբաղվածության ծրագիրն իրագործվելու է 7 կազմակերպությունների կողմից, որոնք ստացել են համապատասխան վկայագրեր. հավաքագրվելու են մասնակիցները, իրականացվելու են համապատասխան վերապատրաստման դասընթացներ, ապահովվելու են կայուն աշխատանք:

Ծրագիրն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության «Պլատֆորմ#5. Հայաստանում կանանց համար տնտեսական հնարավորությունների մեծացում» եւ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցելով սոցիալական պաշտպանության կայուն համակարգ» ծրագրերի կողմից:

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՄԱԼՐԵԼ ԵՆ ՆԱԵՎ ՖԻԶ. ԱՆՁ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎՏԲ-Հայաստան Բանկը մեկնարկել է երեք նոր ավանդներ բանկի ֆիզիկական անձ հաճախորդների համար:

Յուրաքանչյուր պրոդուկտի համար գործում են անհատական պայմաններ: Դրամական միջոցների տեղաբաշխումը հասանելի է ՀՀ դրամով եւ ՌԴ ռուբլով:

Ազգային արժույթով ավանդ ներդնելիս տարեկան եկամտաբերությունը կկազմի 748%-ից մինչեւ 10.22%:

Բանկի ֆիզիկական անձ հաճախորդներին հասանելի են նոր՝ «Կայուն», «Ավելացող» եւ «Անսահման» ավանդատեսակները: Ավանդատուն կարող է ընտրել բարձր տոկոսադրույքով, համալրման եւ մասնակի ելքագրման հնարավորություններով, իրեն հարմար տեղաբաշխման ժամկետով եւ տոկոսների վճարման եղանակով տարբերակ:

«Կայուն» ավանդի շրջանակներում միջոցները կարելի է տեղաբաշխել 1 ամսից մինչեւ 4 տարի ժամկետով՝ սկսած 50 հազար ՀՀ դրամ կամ 10 հազար ռուբլի գումարից: Տվյալ ավանդի համար համալրման եւ մասնակի ելքագրման հնարավորություններ նախատեսված չեն: Տոկոսները վճարվում են ավանդի ժամկետի ավարտին՝ ամսական կտրվածքով կամ ամսական կապիտալացման տարբերակով: Կախված միջոցների տեղաբաշխման ժամկետից՝ ավանդի վաղաժամկետ խզման դեպքում տոկոսները կարող են պահպանվել:

Համալրման հնարավորությամբ «Ավելացող» ավանդատեսակը հասանելի է 30 օրից մինչեւ 3 տարի ժամկետով: «Անսահմանափակ» ավանդի համար լիովին հասանելի են մասնակի ելքագրումներ եւ համալրումներ: Միջոցների տեղաբաշխման ժամկետը տատանվում է 3 ամսից մինչեւ 1 տարի ժամկետով՝ ժամկետի վերջում տոկոսների վճարմամբ: Երկու ավանդների համար էլ տեղաբաշխման նվազագույն գումարը կազմում է 30 հազար ՀՀ դրամ կամ 5 հազար ՌԴ ռուբլի:

«Միջոցներ տեղաբաշխելիս հաճախորդի համար կարեւոր է անհատական մոտեցումը: Ուստի, հաշվի առնելով շուկայում ձեւավորված պահանջները, մենք ընդլայնել ենք մեր խնայողական պրոդուկտների շարքը՝ առաջարկելով երեք տարբեր ավանդներ՝ ճկուն պայմաններով: Դրանք հասանելի են թե՛ ազգային արժույթով եւ թե՛ ռուսական ռուբլով: Սակայն, հաշվի առնելով շահութաբերությունը, ավանդների համար այսօր ամենատարածված արժույթը ՀՀ դրամն է: 2023թ.-ի արդյունքներով բանկի ֆիզիկական անձ հաճախորդների ժամկետային ավանդների ընդհանուր ծավալը գերազանցել է 80 մլրդ ՀՀ դրամը, որից 93%-ը ազգային արժույթով է»,- մեկնաբանել է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրենի - Տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

Ձեւակերպել ավանդ կարելի է ՎՏԲ-Հայաստան Բանկի ցանկացած մասնաճյուղում կամ հեռահար եղանակով՝ Վիդեո բանկինգ ծառայության միջոցով: Ավանդների համալրումը հասանելի է բանկի մասնաճյուղերում: 1 մլն ՀՀ դրամ գումարի կամ դրան համարժեք արտարժույթով ավանդ ներդնելիս հաճախորդին տրամադրվում է դեբետային քարտ՝ ավանդի գործողության ժամկետի ընթացքում անվճար սպասարկմամբ եւ բանկի բանկոմատներից միջոցների անվճար կանխիկացմամբ:

Ֆիզիկական անձանց ավանդները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից, սահմանաչափերը որոշվում են՝ կախված ներդրված միջոցների գումարից: Ավանդի տոկոսագումարից գանձվող եկամտահարկը կազմում է տարեկան 10%:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՊՐԻԼԻ 24

ԱՅՍՕՐ ԼՐԱՆՈՒՄ Է 109 ՏԱՐԻՆ....

Այսօր լրանում է Հայոց Ցեղասպանության իրագործման 109-րդ տարին: Հայտնի է, որ Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ընտրությունը պայմանավորված է հայ մտավորականության տեղահանությամբ, որը հաճախ անվանում են կարմիր կիրակի: Զոհերի հիշատակի օրը առաջին անգամ նշվել է 1919 թվականին՝ Կոստանդնուպոլսում:

Օսմանյան կայսրության մայրաքաղաքի հայ համայնքի առաջնորդները, իսկ հետագայում նաեւ կայսրության այլ համայնքների հայտնի ներկայացուցիչները ձերբակալվում են եւ տեղափոխվում Անկարայի մոտ գտնվող երկու համակենտրոնացման կետեր: Գործողությունն իրականացվում է ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի արձակած հրամանով 1915 թվականի ապրիլի 24-ին:

Այդ գիշեր հայ մտավորականների առաջին հոսքը ձերբակալվել է Կոստանդնուպոլիսում: Տեղահանության մասին օրենքի ընդունումից առաջ ձերբակալվածները տեղաբաշխվում են ամբողջ կայսրության տարածքում. ապա նրանց մեծամասնությունը սպանվել է: Շատ քչերը, այդ թվում Վրթանես Փափազյանը եւ Կոմիտասը փրկվել են անձնական միջամտության արդյունքում:

Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի կողմից տեղահանության մասին հրամանը հրապարակվելուց հետո Կոստանդնուպոլսում գործողությունների ղեկավարումը ստանձնում է քաղաքի ոստիկանության պետ Բեդրի Բեյը: Ապրիլի 24-ի լույս 25 գիշերը ձերբակալվում են 235-ից 270 հայ մտավորականներ, հոգեւորականներ, բժիշկներ, խմբագիրներ, լրագրողներ, փաստաբաններ, ուսուցիչներ: Վերոնշյալ թվի տատանումը պայմանավորված է ոստիկանության ցուցակներում առկա անճշտություններով, քանի որ ձերբակալվել էին նույն անուն ազգանուններով տարբեր մարդիկ:

Երկրորդ հոսքով ձերբակալվում են 500-ից 600 հոգի: Ձերբակալվածների ընդհանուր թիվը քիչ քիչ հասնում է 2345-ի:

Տեղահանվածներին տեղափոխում են երկու ուղղությամբ՝ Չանկիրի եւ Այաս: Պոլսո հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը նախաձեռնում է մտավորականների փրկության աշխատանքներ՝ շնորհիվ տեղահանվածներին տեղափոխող շոգենավի հայ աշխատակցից ստացած ցանկերի, սակայն Կոստանդնուպոլսում նստող դեսպաններից միայն ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն է աջակցության ձեռք մեկնում: Ավելի ուշ սպանությունից հաջողվում է փրկել 10-ից 13 մարդու:

Ձերբակալվածներից ոմանց հաջողվում է ազատ արձակվել տարբեր ազդեցիկ մարդկանց ճնշումների եւ միջամտությունների արդյունքում: Հինգ տեղահանվածներ Չանկիրիից ազատ են արձակվում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի միջամտության շնորհիվ: Ընդհանուր առմամբ 12 տեղահանվածների Չանկիրիից թույլ է տրվում վերադառնալ Կոստանդնուպոլիս: Նրանք էին՝ Կոմիտասը, Բյուզանդ Քեչյանը, Վահրամ Թորգոմյանը, Բարսեղ Դինանյանը, Հայկ Հոճասարյանը, Նշան Կալֆայանը, Երվանդ Թոլայանը, Արամ Գալենտերյանը, Նոյիկ Տեր-Ստեփանյանը, Վրթանես Փափազյանը, Գառնիկ Ինջիջյանը եւ Հակոբ Բեյլերյանը: Կոնյայում բանտարկվածներից չորսին նույնպես թույլ է տրվել վերադառնալ Կոստանդնուպոլիս. Աբիկ Մյուբեհեջյանը, Ադամյանը, Խերբեկյանը եւ Նոսրիկյանը:

Մուդրոսի զինադադարից (30 հոկտեմբերի 1918) հետո, ողջ մնացած հայ մտավորականներին թույլ են տալիս վերադառնալ Կոստանդնուպոլիս, որը գտնվում էր դաշնակից զորքերի վերահսկման ներքո: Նրանք սկսեցին կարճ բայց ինտենսիվ գրական գործունեություն ծավալել, որին վերջ տվեց 1923 թվականին Թուրքիայի հաղթանակը: Նրանցից ոմանք գրեցին հուշեր եւ ստեղծագործություններ՝ տեղահանումների ընթացքում իրենց ապրածի մասին:

Վերապրողներից մի քանիսը հոգեկան անհավասարակշիռ վիճակում հայտնվեցին. նման հոգեկան խախտում է վերագրվում նաեւ Կոմիտասին, ով մահացավ 1935 թվականին Փարիզի հոգեբուժարանում: Շատերը կարծում են, որ նա հոգեպես առողջ էր, եւ հոգեբուժարանում հոգեմետ դեղերի ազդեցության տակ փակելը նրան լռեցնելու միակ տարբերակն էր:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ՝ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՉԵՄՊԻՈՆ

Իտալական Ա Սերիայի 33-րդ տուրի շրջանակում կայացել է «Միլան»-«Ինտեր» հանդիպումը, որն ավարտվել է 2-1 հաշվով: Այսպիսով՝ մրցաշրջանի ավարտից 5 տուր առաջ Հենրիխ Մխիթարյանի թիմը նվաճել է Սկուդետոն՝ անհասանելի դառնալով մրցակիցների համար մրցաշարային աղյուսակում:

Հենրիխ Մխիթարյանը նաեւ 21-րդ դարի առաջին հայ ֆուտբոլիստն է, որը նվաճել է Եվրոպայի թոփ առաջնության տիտղոս:

«Ինտերի» կազմում հայ կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանն առաջին անգամ իր կարիերայում դարձել է թոփ 5 լիգաները ներկայացնող առաջնության չեմպիոն, քանի որ մինչ միլանյան ակումբը հայ ֆուտբոլիստը թոփ 5 լիգաների շրջանակում հանդես է եկել իտալական «Ռոմայում», անգլիական «Արսենալում» ու «Մանչեսթեր Յունայթեդում», գերմանական «Բորուսիա Դորտմունդում»: Ա Սերիայի առաջնության 33 տուրից հետո «Ինտերը» վաստակել է 86 միավոր եւ առաջին տեղում է: «Միլանը» վաստակել է 69 միավոր եւ երկրորդ տեղում է: «Ինտերը» միակ թիմն է Իտալիայում, որն այդպես էլ չի լքել Իտալիայի առաջնության բարձրագույն դիվիզիոնը: Ակումբը նվաճել է 37 տիտղոս Իտալիայում. 20 անգամ դարձել է Իտալիայի չեմպիոն, 9 անգամ՝ գավաթակիր եւ 8 անգամ՝ սուպերգավաթակիր: Ակումբը նաեւ երեք անգամ հաղթել է Չեմպիոնների լիգան:

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ ԿՄԱՍՆԱԿՑԵՆ

Ծանրամարտի եվրոպական ֆեդերացիան ներկայացրել է Փարիզի Օլիմպիական խաղերին մասնակցելու իրավունք ստացած ծանրորդների անունները: Ցուցակի համաձայն՝ Փարիզի Օլիմպիական խաղերին Հայաստանից կմասնակցեն 89 կգ քաշային Անդրանիկ Կարապետյանը, 102 կգ քաշային Գարիկ Կարապետյանը եւ գերծանր քաշային Վարազդատ Լալայանը: Մինչ այս Հայաստանը Փարիզի Օլիմպիական խաղերի 7 ուղեգիր էր նվաճել: 33-րդ խաղերին կմասնակցեն հրաձիգ Էլմիրա Կարապետյանը, մարմնամարզիկներ Արթուր Դավթյանը, Վահագն Դավթյանը, ըմբիշներ Արթուր Ալեքսանյանը, Մալխաս Ամոյանը, Սլավիկ Գալստյանը, Արսեն Հարությունյանը, Վազգեն Թեւանյանը:

ԵԱ-ՈՒՄ 3 ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒՆԵՆՔ

Բռնցքամարտի Եվրոպայի առաջնության մրցումային հերթական օրը՝ ապրիլի 23-ին, Հայաստանն ունի 4 մասնակից: Կանանց 50 կգ քաշային կարգում առաջին մենամարտը կանցկացնի Անուշ Գրիգորյանն, ում մրցակիցը Ռումինիայից Միհաելա Բադեսկուն է:

63 կգ քաշում Սոնա Հարությունն ուժերը կչափի սլովակ Տամարա Կուբալովայի հետ: 70 կգ քաշային Անի Հովսեփյանը կփորձի գերազանցել Ռումինիայից Անդրա Նիկոլետային:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ»

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻ ԱՅՍ ՏԱՐՎԱ ԽՈՐԱԳԻՐԸ

«Խաչմերուկներ. ժամանակակից երաժշտության օրեր Հայաստանում» միջազգային փառատոնն այս տարի կանցկացվի ապրիլի 29-ից մայիսի 16-ը Երեւանում եւ Դիլիջանում: 7-րդ անգամ կազմակերպվող փառատոնը կրում է «Հայկական խճանկար» խորագիրը: Այս տարվա արտիստներից են Անդրիուս Հարությունյանը, Գաշիա Ուզունյանը, Հայկ Մելիքյանը, Ասոնանս անսամբլը, Երեւանի պետական կոնսերվատորիայի Բումերանգ անսամբլը եւ Երեւան լարային քառյակը:

«Խաչմերուկներ» ժամանակակից երաժշտության միջազգային փառատոնը միակն է Հայաստանում, որտեղ ներառվում են համաշխարհային ժամանակակից ակադեմիական երաժշտության մեծաքանակ նոր եւ նշանակալից գործեր: Ընդ որում, դրանց զգալի մասն առաջին անգամ է կատարվում, այսինքն՝ փառատոնը բեմ է հանդիսանում դրանց հայաստանյան եւ համաշխարհային պրեմիերաների համար:

Փառատոնը մշտապես նպատակ ունի ապահովելու համաշխարհային ժամանակակից երաժշտության տարածումը եւ զարգացումը Հայաստանում: Ուստի տարբեր տարիներին այն իր ծրագրում ներառում է մի շարք նոր ստեղծագործությունների հայաստանյան պրեմիերաներ:

Փառատոնի շրջանակներում այս տարի կկազմակերպվի 5 համերգ, «Առնո Բաբաջանյան» համերգասրահում, Կամերային երաժշտության ազգային կենտրոնում, ՀԲԸՄ Հայաստան դահլիճում, Դիլիջանի միջազգային դպրոցում եւ The Office-ում:

Փառատոնի բացման համերգը տեղի կունենա ապրիլի 29-ին Առնո Բաբաջանյան համերգասրահում:

Ասոնանս անսամբլը կներկայացնի Արամ Հովհաննիսյանի, Ալիսիա Թերզյանի, Արթուր Ահարոնյանի, Արսեն Բաբաջանյանի, Ֆրանկ Քրիստոֆ Եզնիկյանի, Ստեփան Ռոստոմյանի ստեղծագործությունները:

Փառատոնի ծրագիրն ամեն տարի հնարավորություն է ստեղծում հայ երաժշտասեր հասարակության համար՝ մշտապես տեղեկացված լինելու արդի ժամանակակից դասական երաժշտության զարգացումներին եւ միտումներին, ինչպես նաեւ նպաստում է նոր ստեղծագործությունների ստեղծմանը:

● Ապրիլի 25-ին՝ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-4000 դրամ:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԳՆԱՃ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ է ԿԲ-ն նպատակադրում 12-ամսյա եւ ոչ թե միջին գնաճ:

Հակոբ Թովմասյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ենթադրենք՝ ԿԲ-ն նպատակադրում է միջին գնաճը, այսինքն՝T+1 թվականի հունվար-դեկտեմբերը՝ նախորդ՝ T տարվա նույն ժամանակահատվածի միջին գների նկատմամբ: T-ն այստեղ ընթացիկ տարին է, (T+1)-ը՝ հաջորդ, (T-1)-ը՝ նախորդ: Միջին գնաճի հաշվարկման մեթոդաբանությունն այնպիսինն է, որ եթե T թվականի հունվարին արձանագրված լինի որեւէ գնային շոկ (օրինակ՝ հացահատիկի գների անսպասելի մեծ աճ միջազգային շուկայում) եւ, հետեւաբար, բարձր գնաճ, ապա այն 2 տարի՝ T թվականի հունվարից մինչեւ T+1 թվականի դեկտեմբեր ամիսը, արտացոլվելու է միջին գնաճի ցուցանիշում: Շոկի ազդեցության աստիճանաբար մարումից հետո գնաճը կայունանում է, սակայն միջին գնաճի ցուցանիշը բարձր է մնում: ԿԲ-ն կանխատեսում է բարձր միջին գնաճ եւ բարձրացնում տոկոսադրույքները: Այս պարագայում, անցյալի իներցիայից ելնելով, գների սպասվելիք մակարդակն ավելի բարձր կլինի, թեեւ գների սպասվելիք մակարդակն արդեն կարգավորված է: ԿԲ արձագանքն այդ պարագայում ոչ համարժեք է, ընկալելի չէ եւ կարող է գնաճային սպասումների ոչ ճիշտ ազդակներ ձեւավորել: Կստացվի, որ ԿԲ-ն, ապագայի գնաճային միջավայրին արձագանքելու փոխարեն, արձագանքում է նախկինում գրանցված գնաճին:

ՀՀ ԿԲ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 12-ամսյա գնաճի պարագայում այդ շոկը գնաճի ցուցանիշում արտացոլվում է միայն 12 -ամիս՝ T+1 թվականի հունվարը, գնաճի 12-ամսյա կանխատեսումներն ավելի ճիշտ են արտացոլում գնաճային միջավայրը, հետեւաբար ԿԲ արձագանքը համարժեք է իրավիճակին՝ թե՛ տոկոսադրույքների ուղղորդման, թե՛ սպասումների ձեւավորման տեսակետից:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՐՑ. Ավագանին կարո՞ղ է բողոքարկել համայնքի ղեկավարի որոշումները, եւ ո՞ր դեպքում:

Նոնա Ալոյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համայնքի ավագանու անդամը համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է նախաձեռնել ավագանու արտահերթ նիստ, եթե համայնքի ղեկավարի որոշումը, իր կարծիքով, հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին: Այս դեպքում ավագանու նիստ պետք է հրավիրվի այդ մասին պահանջը համայնքի ղեկավարին ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Եթե համայնքի ավագանին գտնի, որ համայնքի ղեկավարի որոշումը հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին, ապա նա պարտավոր է համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր բողոք՝ համապատասխան հիմնավորումներով՝ առաջարկելով համայնքի ղեկավարին փոփոխելու իր որոշումը:

Եթե համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում համայնքի ավագանու որոշման վերաբերյալ որեւէ որոշում չի կայացնում, ապա համայնքի ղեկավարի որոշումը համարվում է չընդունված:

ՀՀ ՏԿԵՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համայնքի ղեկավարի որոշումները համայնքի ավագանին կարող է բողոքարկել դատական կարգով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայոց ցեղասպանության տարելիցին ընդառաջ՝ ԱՄՆ Մասաչուսեթսի նահանգի Ներկայացուցիչների պալատի դահլիճում կազմակերպվել է հարգանքի տուրքի արարողություն՝ ի պատիվ ցեղասպանությունը վերապրած 109-ամյա Մերի Վարդանյանի, ով ընթացիկ տարվա օգոստոսին կդառնա 110 տարեկան:

Միջոցառմանը ինչել է ՀՀ պետական օրհներգը: Ելույթ են ունեցել նահանգային սենատորներ, ովքեր բարձր են գնահատել Մերի Վարդանյանի ավանդը հայկական մշակույթի պահպանման գործում ու հայ համայնքում ներդրումը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անվճար կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+2 +5 +18 +22
Կոտայքի լեռներ	+2 +5 +17 +19
Կոտայքի նախալեռներ	+8 +10 +22 +24
Գեղարքունիք	+2 +5 +14 +18
Լոռի	+3 +8 +20 +22
Տավուշ	+8 +12 +23 +27
Արագածոտնի լեռներ	+2 +4 +15 +19
Արագածոտնի նախալեռներ	+9 +12 +22+ 26

Արարատ	+12 +14 +27 +29
Արմավիր	+10 +12 +26 +28
Վայոց ձորի լեռներ	+2 +4 +16 +19
Վայոց ձորի նախալեռներ	+11 +13 +26 +29
Սյունիքի հովիտներ	+8 +11 +25 +27
Սյունիքի նախալեռներ	+4 +8 +18 +20
ԼՂՀ	+2 +6 +17 +21
Երեւան	+18+20 +26 +28

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*